ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2025 թվականի № ----Ա

«ԱՍ-ՍԻՍՏԵՄՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №5 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Հանձնաժողով է ներկայացվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 25-ը,

բ) «ԱՍ-ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի Հաշվետվությունը չի ներկայացրել Հանձնաժողով,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ 2025 թվականի հուլիսի 15-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 15-ի №ՄՄ/34.2-Մ2-7/3426-2025 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը,

զ) Ընկերությունը մինչև 2024 թվականի հուլիսի 30-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները, սակայն, չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2024 թվականի դեկտեմբերի 4-ի №386-Ա որոշմամբ, որն օրինական

ուժի մեջ է մտել 2025 թվականի դեկտեմբերի 10-ին և անբողոքարկելի է դարձել 2025 թվականի փետրվարի 11-ին, տուգանել է Ընկերությանը 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով, ինչպես նաև պարտավորեցրել է որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Ընկերության 2024 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել՝
   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով սահմանված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Հաշվետվությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2025թ.